ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ֆելիքս Պետրոսյանի
- Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Միեր Մկրտչյանի
- Փարաքար համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Անյուտա Սաֆարյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Լյուդվիկ Յայլոյանի
- Մեծամոր համայնքի ղեկավար՝ Էդգար Հովհաննիսյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Բարսեղ Նիկողոսյանի
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Արսեն Պետրոսյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Արամ Գրիգորյանի
- Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Արբակ Եղիազարյանի
- Արմավիրի մարզպետի օգնական՝ Թամարա Շառոյանի
- Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 30–ի Նիստի օրակարգը հաստատելու մասին**

/ ՀՀ Արմավիրի մարզպետ
Վահրամ Խաչատրյան/

2. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2025 թվականի 9 ամիսներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին**

/ Զեկուցող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ
Արայիկ Հակոբյան/

3. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գյուղատնտեսական մթերքների մթերման ընթացքի և առկա խնդիրների մասին:**

/ Զեկուցող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության
վարչության պետ Արթուր Այվազյան/

4. **Սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի, ինչպես նաև 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման մասին:**

/ Զեկուցող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Զարգացման ծրագրերի մշակման
և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյան/

5. **Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ներկայացրած միջնորդագրի քննարկում՝ իրավախախտում ծնող պատճառների և նպաստող պայմանների վերացման մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության
և ենթակառուցվածքների կառավարման
Վարչության պետ՝ Դավիթ Ավետիսյան/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի օրակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N647–Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12-րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը
որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:**

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2025 թվականի 9 ամիսներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին զեկույցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝ Արայիկ Հակոբյանը

Տեղեկացնելով, որ 2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 13803928,5 հազ. դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ

պլանավորված 11940851,5 հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 1863077,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 12655389,3 հազ. դրամ, 30.09.2024թ. դրությամբ հավաքագրված 11681418,0 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 973971,3 հազ. դրամով, կատարվել է 91,7%-ով, նախորդ տարվա 97.8%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 3790700,5 հազ. դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 3327023,2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 463677,3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 3793867,6 հազ. դրամ, 30.09.2024թ. դրությամբ հավաքագրված 3511860,6 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 282007,0 հազ. դրամով, կատարվել է 100,1%-ով, նախորդ տարվա 105,6%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 822681,6 հազ.դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 728167,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 94514,3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 745081,7 հազ. դրամ , 30.09.2024թ. դրությամբ հավաքագրված 685412,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 59669,3 հազ. դրամով, կատարվել է 90,6%-ով, նախորդ տարվա 94,1%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 1529232,8 հազ. դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 1346804,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 182428,5 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 1226765,8 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 1220690,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 6075,1 հազ. դրամով, կատարվել է 80,2%-ով, նախորդ տարվա 90,6 %-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 261709,7 հազ.դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 169050,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 92659,7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 378672,2 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 285199,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 98472,8 հազ. դրամով, կատարվել է 144,7%-ով, նախորդ տարվա 168,7%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 62326,7 հազ.դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 62000,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 326,7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 65986,5 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված. 71505,2 հազ. դրամի համեմատ, պակաս է

հավաքագրվել 5518,7 հազ. դրամով, կատարվել է 105,9%-ով, նախորդ տարվա 115,3%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 123785,3 հազ.դրամ՝ 30.09.2024թ. դրությամբ պլանավորված 123388,7 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 396,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 133566,3 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 130332,0 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 3234,3 հազ. դրամով, կատարվել է 107,9%-ով, նախորդ տարվա 105,6%-ի համեմատ:

2025թ-ի սեպտեմբերի 29-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 745932,8 հազ.դրամ՝ 30.09.2024թ.դրությամբ պլանավորված 730919,9 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 15012,9 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 777923,7 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 732516,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 45407,2 հազ. դրամով, կատարվել է 104,3%-ով, նախորդ տարվա 100,2%-ի համեմատ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գյուղատնտեսական մթերքների մթերման ընթացքի և առկա խնդիրների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը զեկուցեց՝

2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզում ցանքատարածությունները կազմել են 23414,3 հեկտար:

2025թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզում արտադրվել է ՝

1.Հացահատիկ և հատիկաընդեղեն	11.000 տոննա
2. Կարտոֆիլ	47.000 տոննա
3.Բանջարեղեն	223.000 տոննա
4.Բոստան	54.000 տոննա
5.Պտուղ	93.000 տոննա
6.Խաղող	4.000 տոննա
7.Բազմամյա խոտ	71.000 տոննա

Ա. Այվազյանը նշեց, որ գյուղատնտեսական մթերքների իրացման հարցը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության և Արմավիրի մարզպետի ուշադրության կենտրոնում և հավելեց, որ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների իրացումը իրականացվում է մարզում տեղակայված 3 մեծածախ, 3 մանրածախ շուկաներում, պտուղ,

բանջարեղեն մթերող 7 և խաղող մթերող 12 կազմակերպությունների, ինչպես նաև արտահանում իրականացնող բազմաթիվ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջոցով: Գյուղատնտեսական մթերքների իրացման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով վերամշակող կազմակերպությունների և արտահանող սուբյեկտների հետ կազմակերպվում են մշտական հանդիպումներ:

2025 թվականին լոլիկի մթերումների գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայաստանի հանրապետության կառավարութման 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1217–Լ որոշմամբ հաստատվել է լոլիկի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները և միջոցառման շրջանակներում տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդավորման տրամադրման ընթացակարգը:

Ծրագրին մասնակցել է «ՄԱՊ» ՓԲԸ ընկերությունը, որը լոլիկի մթերումը սկսել է օգոստոսի 18-ից՝ նվազագույնը 40 դրամ արժեքով 1 կիլոգրամի համար: Մթերել է 3276,560 տոննա լոլիկ: Ընկերությունում լոլիկի մթերման ողջ գործընթացը իրականացվել է Արմավիրի մարզպետի աշխատակազմի մշտադիտարկմամբ:

Մարզում տեղակայված մթերող կազմակերպությունների կողմից ներկա պահին մթերվել է 10862 տոննա պտուղ բանջարեղեն՝ որից բանջարեղեն 5646 տոննա, պտուղ 5216 տոննա: Աշխատանքները շարունակվում են և խնդիրներ չկան: Իսկ գյուղատնտեսական մթերքների արտահանման գործում մինչև օրս առկա են խնդիրներ, որը ինչպես գիտեք կապված է Լարսի անցակետում լոգիստիկ խնդիրների հետ:

Արմավիրի մարզում խաղողի տարածությունները կազմում են 6235 հա, որից տեխնիկական 4448 հա, որից բերքատու հասակի 4222 հա: 2025 թվականին կանխատեսվում է ստանալ 80-85 հազար տոննա տեխնիկական խաղողի բերք:

Խաղողի մթերման գործընթացում հստակեցում մտցնելու նպատակով հավաքագրվել է տեղեկատվություն խաղողի մթերման ենթակա քանակությունների վերաբերյալ, որի արդյունքում պարզվել է, որ մարզում տեղակայված խաղողի մթերման գործարանները պատրաստակամ են մթերել ավելի շատ խաղող քան մենք կարող ենք առաջարկել, ինչը ցույց է տալիս, որ այս ոլորտում նույնպես խնդիրներ չկան: Այս պահի դրությամբ մթերվել է 45500 տոննա խաղող՝ միջինը 140-150 դրամով:

3. Սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի, ինչպես նաև 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման մասին զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ Լիլիթ Մուշեղյանը

Վերջինս տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1311-Ն որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման մեջ:

Հիմնական փոփոխություններն ու լրացումներն են՝

- ✓ Սուբվենցիոն ծրագրի համար համայնքային բյուջեից համաֆինանսավորման չափի մասով՝ հանվել են մինչև **50. 0 մլն դրամ** համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքերը:
- ✓ 50. 0-ից մինչև 500. 0 մլն դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում՝ յուրաքանչյուր ծրագրի համար համայնքային բյուջեների ֆոնդային մասից ներդրման նվազագույն շեմը փոխվել է 5. 0 մլն դրամից **10. 0** մլն դրամ:
- ✓ Հանվել են 500. 0 մլն-ից 1. 0 մլրդ դրամ ու 1,0 մլրդ և ավելի համայնքային բյուջե ունեցող համայնքների համար երկրորդ և հաջորդ ծրագրերի մասով արտոնյալ պայմանները, որոշմամբ կարգավորումը հետևյալն է.

- 500. 0 մլն-ից 1. 0 մլրդ դրամ բյուջեով համայնքների համար ներդրման նվազագույն շեմը՝ **25. 0 մլն դրամ**

- 1. 0 մլրդ և ավելի դրամ բյուջեով համայնքների համար՝ ներդրման նվազագույն շեմը՝ **50. 0 մլն դրամ:**

- ➢ Հանվել է **նախնական հայտ** ներկայացնելու ընթացակարգը:
- ➢ Ամբողջական փաթեթները ներկայացվում են Մարզպետի աշխատակազմ մինչև ծրագրի իրականացման նախորդող տարվա **օգոստոսի 15-ը:**
- ➢ Մարզպետի աշխատակազմից նախարարություն՝ մինչև ծրագրի իրականացման տարվան նախորդող տարվա **սեպտեմբերի 1-ը:**
- ➢ 2026 թվականի համար ամբողջական փաթեթները ներկայացվում են.
- Մարզպետի աշխատակազմ՝ **մինչև 2026 թվականի մատի 1-ը,**
- Մարզպետի աշխատակազմից նախարարություն՝ **մինչև 2026 թվականի մարտի 15-ը:**

- ➢ Հստակեցվել են սուբվենցիոն հայտերի գնահատման համար ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվող ծրագրերի վերաբերյալ եզրակացությունները՝
  - ✓ դրական
  - ✓ դրական պայմանով
  - ✓ **բացասական**
  - ✓ լրամշակման վերադարձման:
- ➢ Հանձնաժողովը եզրակացություն տալու է նաև ելնելով՝ Կառավարության կողմից հաստատված կամ Կառավարության առաջարկությամբ համայնքների կողմից առաջնահերթ ուղղություններով իրականացվող աշխատանքների առաջընթացից:
- ➢ Հստակեցվել են սուբվենցիոն ծրագրերի ուղղությունները՝ ելնելով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության առաջնահերթություններից.

- դիտարկվելու են միայն **կառուցման, հիմնանորոգման ու վերակառուցման** ծրագրերը՝ բացառելով ընթացիկ նորոգման ու վերանորոգման աշխատանքները:

- ➢ Հանվել են հետևյալ ուղղությունները.

1) Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում,

2) Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում,
3) Աղբահանության ծառայությունների մատուցման համար մեքենասարքավորումների, տեխնիկայի և աղբամանների ձեռքբերում,
4) Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում,
5) Քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների, ինչպես նաև ապաստարանների կառուցում և նորոգում,
6) Համայնքների քաղաքաշինական փաստաթղթերի մշակում:

Հստակեցվել է սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների կազմը:

Սուբվենցիոն հայտի ձևաչափում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

-Պետք է լրացվի «Ծրագրի իրականացման տարվան նախորդող տարվա համայնքի բյուջեն» տողը,
-«Ծրագրի ծախսերը» տողում հստակ ներկայացվեն ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի/բնակավայրի համար նախատեսվող ծախսերը:
-Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը, այդ թվում՝ սուբվենցիոն ծրագրի իրականացման համար բացված **նպատակային համայնքային հաշվեհամարից** ներդրվող մասնաբաժինը:

Նա կարևորեց Կարգի 4-րդ հավելվածով հաստատված մշտադիտարկման գործընթացների բոլոր դրույթների պատշաճ կերպով կատարման ապահովումը: Հատկապես առանձնացրեց հետևյալ դրույթները՝

- ✓ Մարզպետի աշխատակազմում ստեղծվում է ոլորտային մասնագետներից բաղկացած մշտադիտարկման աշխատանքային խումբ, որում կարող են ընդգրկվել նաև տվյալ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմնից անդամներ (համաձայնությամբ): Վերջինիս կողմից իրականացվում են սուբվենցիայի ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության այցելություններ՝ **ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար**:
- ✓ Բոլոր ծրագրերի ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության և լուսանկարների ներկայացում նախարարություն՝ **ամիսը 2 անգամ**
- ✓ **Ծրագրի ավարտի և փակման** վերաբերյալ (լուսանկարներով, հոդվածներով և այլն) համապատասխան համայնքի կողմից ներկայացվում է մարզպետի աշխատակազմ, մարզպետի աշխատակազմը ներկայացնում է նախարարություն:
- ✓ Ծրագրի ավարտից հետո մարզպետի աշխատակազմի և, ըստ անհրաժեշտության՝ նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ոլորտային մասնագետների, ոլորտային գերատեսչությունների համապատասխան մասնագետների (համաձայնությամբ) կողմից իրականացվում են շահագործման հանձնված օբյեկտների մշտադիտարկման ու ծրագրի արդյունավետության

գնահատման մասով այցելություններ՝ **ծրագրի ավարտից հետո առաջին տարվա ընթացքում՝ տարին մեկ անգամ, այնուհետև՝ ըստ անհրաժեշտության:**

Վերջինս հավելեց, որ համայնքապետարաններ են ուղարկվել մի շարք ձևաչափեր, որոնց մասով ակնկալվում է սահմանված ժամկետում ստանալ ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն, դրանք են՝

- համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի շրջանակներում 2021-2025 թվականներին իրականացվող ծրագրերի և թվային ցուցանիշների վերաբերյալ,
- համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի շրջանակներում մինչև 2025 թվականի տարեվերջ կանխատեսվող ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման ենթակա ծրագրերի վերաբերյալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքը (վերանայված տարբերակ, ժամկետ 29. 09. 2025թ.)
- մարզի յուրաքանչյուր բնակավայրի բնակիչների կողմից նշվող երեք առաջնահերթ խնդիրների վերաբերյալ (ժամկետ՝ 30. 09. 2025թ. , մարզպետի աշխատակազմի ժամկետ՝ 01. 10. 2025թ.):

Անդրադարձ եղավ նաև Սուբվենցիայի ծրագրերի ֆինանսավորմանը, մասնավորապես՝ 2025թ. ընթացքում ՀՀ կառավարության 8 որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է շուրջ **1 մլրդ 146** մլն դրամ՝ մարզի **7 համայնքի 27** բնակավայրում իրականացված սուբվենցիայի **27 ծրագրի/46** ենթածրագրի կառավարության մասնաբաժնի համաֆինանսավորման նպատակով:

Համապատասխան համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 2025թ. սեպտեմբերի 29-ի դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ **800. 107** մլն դրամ, աշխատանքները շարունակվում են:

2025թ. սեպտեմբերի 29-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի 6 համայնքին վերաբերելի 8 ծրագրի/12 ենթածրագրի համար վճարման փաթեթ՝ կառավարության մասնաբաժնի հատկացման համար՝ **218 մլն** դրամ ընդհանուր գումարով, որը կհատկացվի Կառավարության առաջիկա նիստերի ընթացքում, աշխատանքները շարունակվում են:

Ներկայացվեց նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից կատարված մշտադիտարկման արդյունքները.

2022-2024թթ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրեր (ընդամենը 101ծրագիր /365 ենթածրագրերով)

- ավարտված - 280 ենթածրագիր (2024թ.-ին՝ 60, 2025թ. -ին՝ 53)
- ավարտական փուլում - 15 ենթածրագիր

- ընթացքի մեջ է - 34 ենթածրագիր /1-ը կիսատ է մնացել, չի իրականացվում/
- չսկսված - 36 ենթածրագիր
- ✓ *չեղարկված - 19 ենթածրագիր*

2025թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերից (21 ծրագիր/ 100 ենթածրագրով)

- ավարտված - 0
- ավարտական փուլում - 3 ենթածրագիր
- ընթացքի մեջ գտնվող - 25 ենթածրագիր
- չսկսված -55 ենթածրագիր
- չսկսված /2026թ. -ին իրականացվող/ -17 ենթածրագիր:

Օրակարգային վերջին հարցն էր Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ներկայացրած միջնորդագրի քննարկում՝ իրավախախտում ծնող պատճառների և նպաստող պայմանների վերացման մասին, որը զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Դավիթ Ավետիսյանը:

Վերջինս տեղեկացրեց, որ 2025 թվականի օգոստոսի 5-ին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ է մուտքագրվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հասցեագրված՝ ՀՀ Քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության միջնորդագիրը, համաձայն որի ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննված թիվ 61208220 քրեական վարույթի նախաքննությամբ Արմավիրի և Արարատի մարզի՝ մինչև տեղական ինքնակառավարման մարմինների խոշորացումը մի շարք համայնքների ղեկավարներ հանդիսանալով պաշտոնատար անձինք, իրենց պաշտոնավարման տարիներին չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները, այն է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ վերահսկողություն չեն իրականացրել իրենց ղեկավարած համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ մի շարք անձանց կողմից հողերն ըստ նպատակային նշանակության օգտագործելու, որի պայմաններում էական վնաս պատճառելով

համայնքների իրավունքներին և օրինական շահերին՝ հողատարածքներն օգտագործվել են ոչ նպատակային նշանակության, համայնքները զրկվել են դրանց գործառնական նշանակությունը փոխելու պարագայում գույքերով ծանրաբեռնված հողերի համար համապատասխան չափերով գույքահարկ և հողի հարկ համայնքի բյուջե մուտքագրելու իրական հնարավորությունից:

Ելնելով վերոնշյալից՝ Դ. Ավետիսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին ուշադրություն դարձնել վերը թվարկված դեպքերի կարգավորմանն ուղղված օրենքների, իրավական ակտերի պահանջների պահպանմանը և հորդորեց նրանց՝ իրենց վերապահված լիազորություններն իրականացնել անշեղորեն և օրենսդրական պահանջների պահպանմամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հետագայում նմանատիպ բացթողումները, ինչպես նաև դրանց արդյունքում հնարավոր հետևանքները բացառելու համար:

Օրակարգային հարցերի քննարկման ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության,

փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝
Աննա Միքայելյան